ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ
Ազատության հրապարակ 1, հեռ՝ 374 244 52021, էլ. փոստ՝ artikmun@mail.ru ինտ, կայք՝ www. artik.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2025 թվականի N 193-Ա

«ՍՈՒՋՅԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ համակարգչային սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 և ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրերով
2025 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված «Սուջյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կնքված պայմանագրի որով կազմակերպությունը ստանձնել է մատակարարել Արթիկի համայնքապետարանին հետևյալ ծառայությունը՝

- համակարգիչների և համակարգչային սարքավորումների ընթացիկ նորոգմում և պահպանում
- տպիչների վերանորոգման քարթրիջների լիցքավորման ընթացիկ նորոգմում և պահպանում

Սակայն 2025թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի որոշմամբ «Սուջյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2025 թվականի հունվարի 15-ին կնքված պայմանագիրը միակողմանի լուծվել է համարելով ամբողջովին լուծված:

Հիմք ընդունելով գնումների https://admin-gnumner.minfin.am/en/admin/content_list/ տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակի համաձայն՝ Լիպարիտ Սուջյանի Հրաչյայի անհատ ձեռնարկատերն (ՀՎՀՀ 57448966) 2023 թվականի մայիսի 13-ից մինչև 2025թվականի մայիսի 13-ը ներառված է գնումներ գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «Ֆրանկո Սուջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև 2026թվականի դեկտեմբերի 31-ը ներառված է գնումներ գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, պետական միասնական գրանցամատյանի «Ֆրանկո Սուջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Սուջյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Լիպարիտ Հրաչյայի Սուջյանը: Ստացվում է, որ Լիպարիտ Սուջյանի Հրաչյայի անհատ ձեռնարկատերը, «Ֆրանկո Սուջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և «Սուջյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել են Լիպարիտ Հրաչյայի Սուջյանի կողմից:

Համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6 –րդ կետի ենթակետով, բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման՝ կարգի 1-ին կետի 1-ին ենթակետով՝ «Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընդանիքի անդամը հանդիսանում է՝

1) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոցից ավելին տնօրինող մասնակից,
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,
3) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տողակալ, գործադիր մամնի գործառույթներ իրականացնող կոլեգիա մարմնի նախագահ, անդամ
4) իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որ աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն չունի:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման՝ կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակիցը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6 –րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցություն իրավունքի սահմանափակման:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ օրենք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6 –րդ կետի պահանջները ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի «Սուջյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումներ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու նպատակով նախատեսված փաստը:

ՈՐՈՇԵՑԻ

1.Ելնելով վերոգրյալի «Սուջյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներքոհիշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղղարկել Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

անվանում	ՀՎՀՀ	գործունեության հասցե	Խախտվել է գնման գործընթացի շրջանակ ներում ստանձնած բոլոր պարտավորությունները	որպես ընտված մասնակից	համայնքի ղեկավարի որոշումը

«Սուջյանս» ՍՊԸ	05564624	ՀՀ Շիրակի մարզ ք.Արթիկ Լմբատ 1 45/3	v	որպես ընտված մասնակից խատել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը 14.02.2025թ Ա ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/2 և ՇՄԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/3

Ելնելով վերոգրյալից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գնահատել բավարար

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կնքման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2025թվականի փետրվարի 14